## 1-6 ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ

## ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Ժամաքանակը՝ 612 (2*34*2+3*34*2+4*34*2)՝ 1-2-րդ դասարաններում՝ շաբաթական 2, 3-4 դասարաններում՝ 3, 5-6-րդ դասարաններում՝4 դասաժամ: 1-2-րդ դասարաններում ուսուցումը կազմակերպվում ամենօրյա 20 րոպեանոց պարապմունքներով:

Օտար լեզվի 1-6-րդ դասարանների առարկայական ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) հիմնվում է «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրում իրականացվող «Ստեղծողի դպրոց. անհատի կրթական պատվեր. մեդիակրթություն» (պետական այլընտրանքային) կրթական ծրագրի վրա, ըստ որի օտար լեզուները, մեդիամիջոցներն ու ինտերնետը ուսուցվում և գործածվում են առաջին դասարանից. ապահովվում են օտար լեզուների և համակարգչային (թվային այլ միջոցների) ամենօրյա պարապմունքներ: Ծրագիրը հիմնված է «Հանրակրթության պետական չափորոշիչների» վրա, համապատասխան որի ա) մշակվում են պետական և այլընտրանքային հանրակրթական ծրագրեր և բ) փորձաքննության են ենթարկվում համապատասխան ներկայացված այլընտրանքային հանրակրթական ծրագրերը:

Հանրակրթության պետական չափորոշիչով սահմանված բովանդակային նվազագույն պահանջները՝ ըստ բնագավառների, կարող են հանրակրթական հիմնական ծրագրերում խորացվել և ընդլայնվել:

Ժամաքանակը ըստ 1-6-րդ դասարանների ուսումնական պլանի.

612 (2*34*2+3*34*2+4*34*2)՝ 1-2-րդ դասարաններում՝ շաբաթական 2, 3-4 դասարաններում՝ 3, 5-6-րդ դասարաններում՝4 դասաժամ: 1-2-րդ դասարաններում ուսուցումը կազմակերպվում ամենօրյա 20 րոպեանոց պարապմունքներով:

1-4-րդ դասարաններում օտար լեզվի դասընթացները իրականացվում են «Իմացումի հրճվանք» ծրագրի շրջանակներում:

### Առարկայի ուսուցման նպատակը

Կրտսեր դպրոցում օտար լեզվի դասավանդման հիմնական նպատակն է սովորողի մոտ խոսակցական լեզվի, օտար լեզվով միմյանց հետ շփվելու, օտար լեզվով բանավոր խոսքի ընկալման հմտությունների ձևավորումն ու զարգացումը: Կարևոր խնդիր և նպատակ է նաև սովորողի մոտ ստացած գիտելիքների և հմտությունների գործածման կարողության զարգացում: Այս տարիքից դրվում են նաև քերականական, շարահյուսական գիտելիքների հիմքերը:

Դասավանդման առաջին իսկ տարվանից դասերը պետք է անցկացվեն անգլերենով: Դրա համար անհրաժեշտ է աստիճանաբար և հետևողականորեն ներմուծել երկու-երեք առօրյա արտահայտություն: Դասարանային բոլոր գործողությունները աստիճանաբար արտահայտվելու են միայն անգլերենով: Դասվանդողը անգլերեն խոսելիս պետք է հստակ գիտակցի, որ անգլերենով ուսուցանվող նյութը պետք է համապատասխանի երեխայի մայրենի լեզվով ունեցած գիտելիքներին:

Տառուսուցումը ոչ թե առանձին ծրագիր կամ նպատակ է, այլ իրականացվում է որպես տառաճանաչության ամփոփում, որը ավարտվում է 2-րդ դասարանի վերջում: Սովորողները մեկ տարվա օտար լեզվի ուսուցման բոլոր մեթոդների շնորհիվ /համակարգչի ստեղնաշար, երգերի և ոտանավորների կառուկե, համակարգչային ուսումնական խաղեր և այլն/ տեսողական ճանաչում են բոլոր տառերը:

Երկրորդ դասարանից սկսած սովորողը ձեռք բերած տառաճամաչության հիմքերը ամրապնդում է ընթերցման շնորհիվ:

Օտար լեզուն դասավանդելիս կարևորվում է.

1. Սովորողի հաղորդակցվելու և համագործակցելու, ոչ հայախոս անձանց հետ շփվելու, լեզվակիր երկրի մշակույթին հաղորդակցվելու հիմքերի ձևավորում;
2. Սովորողի կողմից օտար լեզվի՝ որպես տեղեկություն ստանալու և փոխանցելու դերի և նշանակության, լեզվակիր ժողովրդի հոգևոր-մշակութային արժեքների վերաբերյալ նախնական պատկերացում ունենալու գործում օտար լեզվի իմացության դերի գիտակցումը;

Տարրական կրթության ծրագիրը պետք է ներառի նախնական, տարրական գիտելիքներ, պատկերացումներ.

1. Հաղորդակցման և առօրյա իրադրությունները նկարագրելու համար անհրաժեշտ բառապաշար՝ ուսուցանվող օտար լեզվից
2. Օտար լեզվի հնչյունների ու այբուբենի, արտասանության և ուղղագրության տարրական կանոնների մասին
3. Պարզագույն բառակապակցություններ և նախադասություններ կազմելու կանոնների մասին
4. Լեզվակիր ժողովրդի բանահյուսության և երաժշտության որոշ նմուշների մասին

**Խնդիրները.**

**1-ին դասարան**

1. Սովորողի մոտ ձևավորել օտար լեզվի մասին տարրական պատկերացում- երգերի, ոտանավորների, պարզ,առօրյական հարց ու պատասխանի միջոցով
2. Զարգացնել լսելու, հասկանալու և խոսելու հմտությունները.
    - Լսել և հասկանալ դասավանդողի պարզ խոսքը
    - Լսել և կատարել ուսուցչի հրահանգները
    - Լսել և հասկանալ պարզ մանկական երգեր
    - Լսել և հասկանալ պարզ, առօրյական երկխոսություններ
    - Լսել և ճիշ պատասխանել հարցերին
    - Կարողանալ վարել փոքր երկխոսություններ
3. Ձևավորել սովորողի տարիքին համապատասխան բառապաշար
4. Կիրառել ՏՀՏ-ներ (համակարգիչ, էլ.գրատախտակ, համացանց)-դասավանդողի օգնությամբ: Սովորողները կարողանում են ինքնուրույն բացել խաղերի, նյութերի թղթապանակները, ընտրել խաղը, կատարել այն: Ուսուցչի օգնությամբ գտնում են անհրաժեշտ կայքը, ընտրում խաղը, դասը, երգը, կատարում այն:
5. Սովորեցնել տարիքին համապատասխան քերականական տարրեր, առանց դրանք անվանելու

**2-րդ դասարան**

1. Սովորողի մոտ ձևավորել օտար լեզվի տառերի և հնչյունների մասին պատկերացում
2. Զարգացնել լսելու, ունկնդրելու կարողությունները
3. Զարգացնել օտար լեզվով խոսելու հմտությունները
4. Ընդլայնել բառապաշարը
5. Կիրառել ՏՀՏ-ներ (համակարգիչ, էլ.գրատախտակ, համացանց)-դասավանդողի օգնությամբ: Սովորողները ինքնուրույն գտնում են խաղերը, գիտեն անհրաժեշտ ուսումնական կայքերի հասցեները, բացում են դրանք, ընտրում նյութը, կատարում: Կարողանում են լուսանկարել:
6. Սովորեցնել տարիքին համապատասխան քերականական տարրեր, առանց դրանք անվանելու

**3-րդ դասարան**

1. Զարգացնել խոսելու հմտությունները
2. Զարգացնել գրելու հմտությունները
3. Ընդլայնել բառապաշարը
4. Զարգացնել ընթերցման և ունկնդրման հմտությունները
5. Ստեղծել միջավայր կամ իրավիճակ, որտեղ սովորողը կկիրառի իր գիտելիքներն ու հմտությունները

6. Կիրառել ՏՀՏ-ներ (համակարգիչ, էլ.գրատախտակ, համացանց, ֆոտոխցիկ, ձայնագրիչ)- դասավանդողի օգնությամբ և ինքնուրույն: Սովորողները ինքնուրույն բացում են անհրաժեշտ կայքերը, ընտրում նյութերը, կատարում: լուսանկարում են, ձայնագրում, արված նյութը ներբեռնում համակարգչում: Կարողանում են էլեկտրոնային փոստից ներբեռնել ֆայլեր, թեստեր, կատարել դրանք:
7. Սովորեցնել տարիքին համապատասխան քերականական տարրեր, տալով որոշակի պարզաբանումներ

**4-րդ դասարան**

1. Զարգացնել խոսելու հմտությունները
2. Զարգացնել գրելու հմտությունները
3. Ընդլայնել բառապաշարը
4. Զարգացնել ընթերցման և ունկնդրման հմտությունները
5. Ստեղծել միջավայր կամ իրավիճակ, որտեղ սովորողը կկիրառի իր գիտելիքներն ու հմտությունները
6. Միջառարկայական կապ ստեղծել այլ առարկաների հետ /մայրենի, մաթեմատիկա, տեխնոլոգիա, երգ և այլն/
8. Կիրառել ՏՀՏ-ներ (համակարգիչ, էլ.գրատախտակ, համացանց ֆոտոխցիկ, ձայնագրիչ)- ինքնուրույն: Ինքնուրույն կարողանում են լուսանկարներից և ձայնային ֆայլերից պատրաստել ֆիլմեր պարզ ծրագրերով /Movie Maker/, կիրառել SkyDrive-ը, ուսուցչի օգնությամբ պատրաստել կարաոկե, բացել ծանոթ ուսումնական կայքեր, կատարել առաջադրանքներ:
9. Սովորեցնել տարիքին համապատասխան քերականական տարրեր, տալով որոշակի պարզաբանումներ

**5-րդ դասարան**

1. Զարգացնել խոսքը
2. Զարգացնել գրելու հմտությունները
3. Ընդլայնել բառապաշարը,ավելացնելով տարբեր իդիոմատիկ արտահայտություններ, ասացվացքներ և այլն
4. Զարգացնել ընթերցման և ունկնդրման հմտությունները
5. Ստեղծել միջավայր կամ իրավիճակ, որտեղ սովորողը կկիրառի իր գիտելիքներն ու հմտությունները
6. Միջառարկայական կապ ստեղծել այլ առարկաների հետ /մայրենի, մաթեմատիկա, տեխնոլոգիա, երգ և այլն/
7. Կիրառել ՏՀՏ-ներ (համակարգիչ, էլ.գրատախտակ, համացանց, ֆոտոխցիկ, ձայնագրիչ)- ինքնուրույն: Սովորողը ինքնուրույն օգտագործում է ֆոտոխցիկը, ձայնագրիչը,

կարողանում է վերցնել հարցազրույցներ, խմբագրել աուդիո և ֆոտո ֆայլեր, տեղադրել դրանք կայքում
8. Սովորեցնել տարիքին համապատասխան քերականական տարրեր, պարզաբանելով դրանք

**6-րդ դասարան**

1. Զարգացնել խոսքը
2. Զարգացնել գրելու հմտությունները
3. Ընդլայնել բառապաշարը,ավելացնելով տարբեր իդիոմատիկ արտահայտություններ, ասացվացքներ և այլն
4. Զարգացնել ընթերցման և ունկնդրման հմտությունները
5. Ստեղծել միջավայր կամ իրավիճակ, որտեղ սովորողը կկիրառի իր գիտելիքներն ու հմտությունները
6. Միջառարկայական կապ ստեղծել այլ առարկաների հետ /մայրենի, մաթեմատիկա, տեխնոլոգիա, երգ և այլն/
7. Կիրառել ՏՀՏ-ներ (համակարգիչ, էլ.գրատախտակ, համացանց, ֆոտոխցիկ, ձայնագրիչ)-ինքնուրույն: Սովորողը պատրաստում է տեսաֆիլմեր տարբեր ծրագրերով, նյութերը տեղադրում Youtube-ում, հղումը՝ կայքում:
8. Սովորեցնել տարիքին համապատասխան քերականական տարրեր, պարզաբանելով դրանք

## Ուսումնական միջավայր և դրանցում կազմակերպվող գործունեության ձևերը

Ուսումնական միջավայրը կարող է տարբերվել՝ ելնելով դասի նպատակից, եղանակային պայմաններից և կազմակերպման ձևից: Ուսումանական տարածք կարող են լինել.

1. Կրթահամալիրի ընթարձակ և լուսավոր դասասենյակները, որոնք ապահովված են էլ. գրատախտակով, պրոյեկտորով, համակարգչով,
    - դասեր
    - դաս-խաղեր
    - ընթերցում
    - գրավոր աշխատանքներ
    - աշխատանք համակարգչով
    - աշխատանք էլ. գրատախտակով
2. Ներքին և արտաքին բակերը,
    - Տարվա յուրաքանչյուր եղանակին բնորոշ խաղեր կազմակերպելու համար
    - Ուսումնա-հասարակական աշխատանքներ
    - Բացօթյա դասեր –ընթերցում, ունկնդրում, դերախաղեր, բակային խաղեր

- Լողավազան-լողափնյա խաղերի և երգերի կիրառում

3. Ցուցասրահներ
    - Աշխատանքներ ներկայացում
    - Միջոցառումների կազմակերպում
    - Հանդեսների փորձեր
    - Խաղերի կազմակերպում
4. Մարզական դահլիճներ
    - Օտար լեզվով մարզանքի համար
    - Սպորտային միջոցառումներ, օլիմպիկներ /նույնպես օտար լեզվով/
5. Խոհանոց-լաբորատորիաներ
    - Թեմատիկ բառապաշարի գործածման հմտությունների զարգացման համար /սնունդ, խոհանոցային գործողություններ/
    - Ծիսական ուտեստների պատրաստման ընթացքում օտար լեզվի գործածման համար /գործողությունները տեսագրվում են և ներկայացվում տեսաֆիլմի կամ ֆոտոֆիլմի տեսքով/
6. Տեխնոլոգիական լաբորատորիաներ
    - Աշխատանք կավագործության լաբորատորիայում
    - Աշխատանք դիզայնի, կերպարվեստի սրահներում
7. Գրադարան
    - Ընթերցանություն
    - Թարգմանություն
    - Աշխատանք նոութբուքերով
8. Փոքր դահլիճ
    - Օտար լեզվով թատերական ներկայացումներ դիտելու կամ ներկայացնելու համար

## Ուսուցման վիրտուալ միջավայր

Կրթահամալիրը իրականացնում է մեդիակրթություն և առաջին իսկ դասարանից սովորողները հմտանում են ՏՀՏ-ների կիրառման գործընթացում: ՏՀՏ-ների խորացված ուսուցումը պահանջում է ուսուցման որոշակի վիրտուալ տարածք կամ միջավայր: Դրանցից են.

1. Live@Edu համակարգի էլ.փոստեր /էլ.փոստ ուեն նաև սովորողների ծնողները/, որոնք սովորողները սովորում են ինքնուրույն կառավարել: Էլ.փոստով սովորողները և դասավանդողները կարող են կատարել հետևյալ գործողությունները.
    - Ստանալ տնային առաջադրանքներ
    - Ուղարկել կատարած տնային առաջադրանքը
    - Առաջադրանքները ստանալ էլ.փոստի օրացույցով, որը մինչև կատարման ժամկետը հիշոցումներ կուղարկի սովորողին

2. 4-րդդասարանից սովորողը արդեն ունենում  է իր անձնական բլոգը, որի կառավարումը պահանջում է օտար լեզվի գիտելիքների որոշակի պաշար:
3. Դասավանդողի անձնական բլոգերը /պարտադիր է կրթահամալիրի բոլոր դասավանդողների համար/: Դասավանդողները նյութեր են տեղադրում բլոգերում, առցանց քննարկումներ կազմակերպում օտար լեզվով և այլն:
4. Կայքը և ենթակայքերը, որտեղ սովորողները դասավանդողի, ծնողի օգնությամբ կամ ինքնուրույն օտար եզվով նյութեր են տեղադրում: Նյութերը կարող են լինել նաև խմբային, դասարանական: Ենթակայքերում այդ նպատակի համար ստեղծված են հատուկ տարածք-բաժիններ՝  “ուրախ օտար լեզու”, “ուրախ կարաոկե” վերնագրերով: Այստեղ տեղադրվում են սովորողների, դասավանդողների լավագույն աշխատանքները, ուսումնական խաղեր, ինտերնետ ռեսուրսներ:
5. Բոլոր ուսուցանվող երգերը թարգմանվում են Lingvo, Google Translator կամ համակարգչում առկա այն բառարանների և ծրագրերի օգնությամբ: Դասարանում թարգմանությունը կատարում են սովորողները՝  դասավանդողի վերահսկողությամբ: Այնուհետ երգի կամ ոտանավորի բառերը ուղարկվում են բոլոր սովորողների հասցեներին,նրանք տանը կրկին ընթերցում, սովորում են այն:

Միջավայրի կարևոր բախկացուցիչներից են հանդիսանում դասավանդողին և սովորողին անհրաժեշտ նյութերը և գործիքները: Դասասենյակը կամ աշխատանքային կաբինները պետք է պատրաղիր ունենա.

- համակարգիչ,
- էլ.գրատախտակ,
- անխափան ինտերնետ,
- Էլ.գրատախտակին կարող են փոխարինել պրոյեկտորն ու նոութբուք-նեթբուքերը /այն պայմանով, որ դասարանը ներգրավված է “Նոութբուքն ինձ դասընկեր” ծրագրում/,
- Ուսումնական ռեսուրսներ, որոնք տեղադրված կլինեն դասարանի համակարգչում, ենթակայքում, ֆլեշի վրա
- Աշխատանքային նյութեր
- Դասագրքեր, որոնց թվայնացված տարբերակները տեղադրված կլինեն  և՝ գրադարանի ենթակայքում www.gradaran.mskh.am, ինչպես նաև ներբեռնված կլինեն համակարգչում, դասավանդողի և սովորողի անհատական նոութբուքերում-նեթբուքերում, բլոգերում:
- Օտար լեզվով տվյալ դասարանի մակարդակի համար համապատասխան գրականություն
- Բառարաններ
- Էլեկտրականության բացակայության դեպքում համակարգչով նախորոք պլանավորած դասը չտապալելու նպատակով դասարանում պետք է առկա լինեն դասագիրք կամ այդ տարիքին համապատասխան այլ գրականություն, նյութեր, գունավոր մատիտներ, ալբոմներ և այլն:

## Բովանդակություն

| I դասարան | | |
|---|---|---|
| Ուսուցանվող նյութ | Ուսուցանման համար առաջարկվող նյութեր | Քերականություն |
| **<u>Ողջունի ձևեր</u>**<br>Hello, Hi,<br>Good morning, good afternoon, good evening, good night, goodbye, bye-bye<br>**Ծանոթություն**<br>What's your name?<br>How old are you?<br>How are you?<br>**Գործողություններ,**<br>Stand up, sit down, sing, play, count, listen, look,<br>**Թվական 1-10-ը** | Երգեր, ոտանավորներ, դասարանական հրահանգներ<br><br>♫ Hello, hello, let's sing hello, hello,<br>Stand up, sit down, let's sing hello, hello,<br>Good bye, good bye, let's sing good bye, good bye.<br><br>♫ Good morning, I am your teacher,<br>Good morning you are my students,<br>Good morning, what's your name?<br>My name is…..<br>Please, stand up, please, sit down,<br>Please, stand up, please sit down,<br>Good morning…<br><br>♫ One, two, three, four, five<br>Let's count, let's count and sing<br>Six, seven, eight, nine, ten,<br>Let's sing this song again.<br><br>♫ Happy birthday, happy birthday<br>How old are you? How old are you?<br>Five or six or seven? Five or six or seven?<br>How old are you? How old are you? | Հոդ /a, an, the/<br>Գոյական /թիվ—s, որոշ բացառություններ-man-men,woman-women, child-children, mouse-mice, sheep-sheep/<br>Ածական /գույն, չափ, ձև/<br>Դերանուն /անձնական-, ստացական, հարցական /what,who/<br>Նախդիր /in, on, under, at, to-ուղղություն/<br>Բայ-ժամանակաձև- ներկա անորոշ, ներկա շարունակական պարզ նախադասություններ, առօրյա պարզ գործողությունների նկարագրեր /քերականական այս պարզաբանումները ահրաժեշտ են դասավանդողին, սովորողը այս ամենը կիրառում է դեռ առանց գիտակցելու,մեխանիկորեն/ |
| **Իմ շրջապատը, շրջապատող առարկաներ**<br>My classroom, door, window, picture, computer, whiteboard, pen, pencil, book, bag<br>**Իմ ընտանիքը**<br>Mother, father, brother, sister,<br>**Խաղալիքները** | 🕮 Mother, father, sister, brother,<br>One, two, three, four<br>We are the family of four.<br><br>♫ «Teddy Bear»<br>♫ One and two and three and four<br>I am sitting on the floor,<br>I am playing with my ball<br>And a pretty little doll…. (car-star, dog- | |

| | | |
|---|---|---|
| Toy, teddy bear, doll, ball, car, bicycle,<br>**Գործողություններ**<br>Open, close, watch, draw, | frog, hen-pen, house-mouse, hare-bear…) | |
| **Արտաքին տեսքի պարզ նկարագրություն**<br>The parts of the body, clothes (shirt, skirt, hat, shoes, boots, cap, jacket)<br>**Have got** | ♫ Head and shoulders, knees and toes…<br>One head, one nose, two eyes, (3)<br>And one, two, three, four, five.<br>Two arms, two hands, two legs (3)<br>And one, two, three, four, five. | |
| **Գույներ**<br>Colours | ♫ «Colours of the rainbow»<br>♫ «My box of colours» | |
| **Կենդանիներ**<br>Animals (domestic, wild)<br>Dog, cat, mouse, horse, cow, sheep, goose, duck, hen, pig, rabbit, hare, bear, wolf, fox | ♫ There was a farmer, who had a dog<br>And Bingo was its name. (B-I-N-G-O)<br>There was a farmer, who had a cat,<br>And Nabee was its name. (N-A-B-E-E)<br>There was a farmer, who had a bird,<br>And Cucoo was its name (C-U-C-O-O).<br><br>♫ | |
| **Տոներ**<br>Birthday, New Year, Mother's day, Christmas, Easter | ♫ Happy birthday, happy birthday<br>How old are you? How old are you?<br>Five or six or seven? Five or six or seven?<br>How old are you? How old are you?<br>♫ New year songs<br><br>🕮 Father Frost, Father Frost,<br>Bring many toys<br>For little girls and little boys.<br><br>♫ «Have you seen the Easter bunny?»<br>♫ «Lady Bug, Lady Bug.»<br>🕮 «My dear, dear, mummy» | |
| **Մրգեր, բանջարեղեն, սնունդ**<br>Food, meals<br>Apple, orange, banana, apricot, peach, pear, plum, grapes, tomato, potato, | ♫ I like apples, I like apples,<br>What's about you? What's about you?<br>Strawberry, banana, Strawberry, banana,<br>I like apples, too, I like apples, too.<br><br>🕮 One, two, three-let me see | |

| | | |
|---|---|---|
| cucumber, onion<br>Ice-cream, candy, chocolate, sandwich, juice, milk, water, tea, coffee<br>**Իմ նախասիրությունները**<br>I like/I don't like | Who likes coffee, who likes tea. | |
| **Զգացմունքի/վիճակի պարզ նկարագրություն**<br>Emotions/feelings<br>I am happy, I am sad<br>I am hungry, I am tired | | |
| | | |

| II դասարան | | |
|---|---|---|
| Ուսուցանվող նյութ | Ուսուցանման համար առաջարկվող նյութեր | Քերականություն |
| **Ծանոթություն**<br>**Կրկնողություն** What's your name? How old are you? How are you?<br>**Նոր նյութ**<br>Where are you from?<br>Interrogative sentences: How many…? Do you like…? What do you like? Have you got…?<br><br>**Թվական՝ տասնյակներ, 100** | | Հոդ /a, an, the/<br>Գոյական /թիվ—s, -ss որոշ բացառություններ-knife-knives, wolf-wolves, shelf-shelves/<br>Հաշվելի-անհաշվելի գոյականներ-milk,water, snow, bread, etc.<br>Ստացական հոլով-'s<br>Ածական /գույն, չափ, ձև, որակ/<br>Դերանուն /անձնական, ստացական, հարցական /what, who/<br>Նախդիր /in, on, under, at, to, near, /<br>Բայ-ժամանակաձև- ներկա անորոշ, ներկա շարունակական պարզ նախադասություններ, առօրյա պարզ գործողությունների նկարագրեր |
| **Իմ շրջապատը, շրջապատող առարկաներ**<br>**Կրկնողություն**-<br>Classroom, my room, school yard, my playground,<br>**Իմ ընտանիքը**<br>**Կրկնողություն**-<br>Grannies, uncle, aunt | | |

| | | |
|---|---|---|
| **Խաղալիքները Կրկնողություն**- Chess, computer games, outdoor games, | | |
| **Արտաքին տեսքի պարզ նկարագրություն Կրկնողություն**- Tall, short, big, little, small, description of the face, dress, | | |
| **Զգացմունքի/վիճակի պարզ նկարագրություն Կրկնողություն**- Emotions/feelings I am thirsty, I am ill, I am busy, I am surprised, I am angry, I am glad | | |

| III-IV դասարան<br>I և II դասարաններում ուսուցանվող բոլոր թեմաները կրկնվում են 3-4-րդ դասարաններում՝ բառապաշարի ավելացմամբ, ինչպես նաև ավելանում են ստորև բերված թեմաները: Դասավանդումը անցկացվում է նաև արդեն դասագրքերով: | | |
|---|---|---|
| Ուսուցանվող նյութ | Ուսուցանման համար առաջարկվող նյութեր | |
| • Տարվա եղանակներ, ամիսներ, շաբաթվա օրեր<br>• Բնակավայրը, բնակարան, սենյակ<br>• Մասնագիտություն ներ<br>• Նախասիրությունն երը /ազատ ժամանակ/<br>• Ուսումնական առարկաներ<br>• Սնունդ /նախաճաշ, ճաշ, ընթրիք/<br>• Օրվա նկարագիր | Ուսուցման համար առաջարկվող նյութերը՝ դասագրքերից, ուսումնական կայքերից | Հոդ /a, an, the/<br>Գոյական /եզակի-հոգնակի թիվ, հոգնակի թվի բացառությունները, /, գոյականի ստացական հոլովը -’s, հաշվելի անհաշվելի գոյականներ<br>Ածական / Ածական /գույն, չափ, ձև, որակ/<br>Բայ /կանոնավոր-անկանոն բայեր/, Անցյալ անորոշ, Ապառնի- պարզ նկարագրություններ,<br>Մոդալ բայեր /can, may, must/<br>Դերանուն /անձնական, ցուցական-this-these, that- |

| | | |
|---|---|---|
| • Ազգականներ<br>• Ժամացույց, ժամանակ, գումարում, հանում<br>• Բնության, շրջապատի պարզ նկարագրեր<br>• Զգացմունքներ | | those, հարցական, ստացական/<br>Նախդիր-/in, on, under, at, to, near, above, behind, next to, in front of, /<br>Մակբայ /-ly /<br>Թվական /քանակական և դասական/ |

5-6-րդ դասարանների առարկայական բովանդակությունը <u>տես այստեղ:</u>

**Դասի անցկացման հնարավոր ձևեր**

Կազմակերպել դերային խաղեր՝ թեմատիկ երկխոսություն՝ երկու անծանոթ հանդիպում են միմյանց, ողջունում:

Խաղ-հրահանգ. Դասավանդողը կամ սովորողներից որևէ մեկը հրահանգներ է տալիս սովորողներից մեկին: Նա պետք է անսխալ կատարի բոլոր հրահանգները:

Թվերը կրկնելու համար կարելի է հաշվել դասարանում առկա իրենց ծանոթ առարկաները

Սովորողները նկարում են իրենց շրջապատող առարկաները, այնուհետ յուրաքանչյուրը պատմում է իր ընկերոջ պատկերածը:

Դասավանդողը կարող է նայն նկար-թելադրություն տալ. նա  որևէ երգ կամ ոտանավոր է արտասանում, իսկ սովորողները փորձում են դա պատկերել:

Դասարան են բերում իրենց սիրած խաղալիքները, ներկայացնում դրանք, նկարագրում, փոքր ներկայացում բեմադրում:

Մի սովորող կանգնում է էլ.գրատախտակի մոտ իսկ մյուսը անգլերեն արտաքին տեսքի նկարագրություն է տալիս: Գրատախտակի մոտ կանգնած սովորողը պետք է ճիշտ նկարի:

Խաղում են Ձնագնդի հետևյալ կերպ. առաջին սովորողը ասում է.  I have got a pen. Հաջորդը պետք է կրկնի առաջինի ասածը և ավելացնի իր նախադասությունը. Օրինակ՝  He has got a pen and I have got a book, և այսպես մինչև վերջին սովորողը: Պարտված է համարվում է այն սովորողը, որը սխալվում է և խախտում է շղթան: Այս խաղի օգնությամբ սովորողը կրկնում է և՝ I have got արտահայտությունը և՝ երրորդ դեմքի has

Անվանում են դասարանում առկա իրերը ը դրանց գույները:

Համացանցից խաղում են տարբեր թեմատիկ խաղեր: www.angles365.com, www.starfall.com, www.cubeez.com, www.britishcouncil.org, www.genkienglish.net

Կենդանիների անունները կրկնելու համար բեմադրվում են պարզ հեքիթներ, դերախաղեր: Դասարանում ստեղծվում է ինքնաշեն փոքր տիկնիկային թատրոն՝ շիրմայով և խաղալիքներով և սովորողները բեմադրություններ են ներկայացնում դասարանում կամ հյուրախաղերով զբոսնում այլ դասարաններով:

Տարբեր տոների համար էլեկտրոնային բացիկներ են պատրաստում, պատկերազարդում, դասավանդողի օգնությամբ փոքր մաղթանքներ գրում:

Սնունդը կրկնելիս կարող են վիրտուալ կամ իրական այցելություն կատարել շուկա, խանութ, կատարել գնումներ, պատրաստել մրգային կամ բանջարեղենեղային աղցաններ և այլն:

Ուսումնական օրացույցով որոշված բոլոր տոների նախապատրաստումները և միջոցառումներին մասնակցությունները նույնպես հանդիսանում են որպես դասարանական կամ տնային աշխատանք: Մասնակցության ձևերը կարող են լինել հետևյալը.

1. Մեդիաօլիմպիադայի առաջադրանքների ստեղծում և կատարում /ծնողի մասնակցությունը խրախուսվում է/
2. DigiTec Expo 2011-կայքում օտար լեզվով լուսաբանում, հարցազրույցներ արտասահմանցի այցելուների հետ, ռադիոլուր
3. Հեղինակային մանկավարժության արդյունքների հասարակական ամենամյա հոկտեմբերյան մեդիափորձաքննություն-բաց դասեր, նյութերի ներկայացում
4. Մխիթար Սեբաստացու օրեր. կրթահամալիրի տոնը - մրցաշարեր, անգլերենով հոլովակներ, ֆիլմեր (կրթահամալիրի ուղեցույց), կրթահամալիրի 7 հրաշալիքներ (նյութ անգլերենով), ընթերցումներ (ռադիոլուր, ռադիոթատրոն), 5-6-րդ դասարանցիների վարպետության դասեր փոքրերին
5. Ձմեռային ուսումնա-հետազոտական ճամբարներ - դասարանական, խմբային, ջոկատային նախագծեր, նախապատրաստում ամանորյա ծեսին
6. Ամանորյա ծեսեր - ամանորյա հանդես-ելույթներ, երգեր, բեմադրություններ, ավանդույթների ներկայացում, կարառկեներ
7. Ընտրությամբ գործունեության և խորացված ուսուցման կիսամյակային հաշվետվություններ - կայքում տեղադրված հաշվետվություն, մեդիաելույթներ (ռադիոլուրեր, երգերի կատարում բանաստեղծությունների մեդիաընթերցանություն)
8. Սովորողների նախասիրությունների զարգացման ձմեռային ստուգատեսներ - ուսումնական, հետազոտական, ստեղծագործական նյութերի պատրաստում, կայքի նյոթեր, թարգմանություններ
9. Հանրակրթական Դիջիտեք 2012- ֆիլմերի, հոլովակների և այլ թվային նյութերի պատրաստում
10. Զատիկ - օտար լեզվով նյութերի ստեղծում, երգեր, ոտանավորներ, ավանդույթներ

11. Էկոտուր - համապատասխան բառապաշար անգլերենով, էկոբառարանի ստեղծում, էկոնյութեր ֆիլմեր կայքում
12. Հեղինակային մանկավարժության հեղինակների մայիսյան մեդիահավաք - բաց դասեր, հոդվածներ, նյութեր, ելույթ անգլերեն երգով Մարմարյա սրահում
13. Ամառային ուսումնահետազոտական ճամբարներ - ջոկատային, բացօթյա, լողավազանային նախագծեր, հասարակական նախագծեր
14. Սովորողների նախասիրությունների զարգացման ստուգատեսներ, ռոդարիական թատրոնի ամառային ստուգատես-թատրոններ, ռադիոթատրոն, միջոցառումներ, երգուպար
15. Ամենամյա մեդիափառատոն - ֆիլմեր, տեսահոլովակներ
16. Ամենամյա երաժշտական փառատոն - երգերի կատարում, օտար լեզվով երգերի խոսքերի հորինում, կատարում
17. Ամառային պարտեզների գործունեություն - աշխատանք ամառային պարտեզում (կամավոր) փոքրերի հետ, օտար լեզվով երգերի, ոտանավորների ուսուցանում, ճամբարային հիմն, խաղեր

Ուսումնական օրացույցով որոշված արձակուրդների ընթացքում սովորողը շարունակում է կրթությունը՝ հեռավար ուսուցման միջոցով: Համացանցի միջոցով (կրթահամալիրի կայքը, դպրոցների ենթակայքերը, էլեկտրոնային փոստը) սովորողները առաջադրանքներ են ստանում և կատարում: Դասավանդողը ստուգում է առաջադրանքը և պատասխանում սովորողին: Նյութերը տեղադրվում են կայքում, դպրոցների և «Պարտեզ» ենթակայքերում: Արձակուրդներին, ինչպես նաև շաբաթ-կիրակի օրերին կարող են կազմակերպվել ուսումնական ճամփորդություններ, որոնց արդյունքը նույնպես լինի օտար լեզվով պատրաստված ուսումնական նյութ կամ հաշվետվություն:

Որպես դասարանական կամ տնային աշխատանքի կամ նախագծի օրինակ կարող են հանդիսանալ նաև ստեղծագործական-ստեղծական/հետազոտական աշխատանքները, որոնք կարող են լինել զանազան թեմաներով և ներկայացման ձևերով.

Հետազոտական աշխատանքները լինում են երկու տեսակի՝

1. Սովորողը յուրացրած նյութի մասին ավելի խորը տեղեկություն է գտնում, ընդլայնում է գիտելիքները՝ օգտվելով այլ աղբյուրներից. համացանց, գրադարան, հանրագիտարաններ
2. Սովորողը ստացած գիտելիքների միջոցով ներկայացնում է այս կամ այն երևույթները իր մասին խոսելիս (իր ընտանիքի, ընկերոջ, նախասիրությունների, առօրյայի)

Պահանջները

Ստեղծագործական-հետազոտական աշխատանքը պետք է հիմքում ունենա ծրագրային բովանդակությունը, լինի որպես առանձին թեմաների ամփոփում:

- Նյութի աղբյուրը համաձայնեցվում է ուսուցչի հետ
- Այն պետք է մատչելի լինի սովորողին
- Այն պետք է պարունակի գլխավոր ինֆորմացիան
- Սովորողը պետք է կարողանա այն ներկայացնել դասարանի առջև
- Սովորողը այն փոխանցում է մյուս սովորողներին՝ հրապարակելով այն կայքում և բլոգում:
- Աշխատանքը գնահատվում է 10 բալանոց համակարգով

## Ձևերը

- Կարող է լինել տեսանյութ, որտեղ սովորողը կկիրառի իր ձեռք բերած տարբեր հմտությունները՝ հարցազրույց, կոնկրետ թեմայի վերաբերյալ բառապաշար, ինֆորմացիա:
- որև է հեքիաթ, դրա սովորողի հորինած տարբերակը, որը կներկայացվի սովորողի հեղինակային լուսանկարներով, տեսանյութերով, կամ տարբեր համակարգչային ծրագրերով պատրաստած պատկերազարդումներով:
- Օրինակ՝ Ընտանիք թեման՝ պատրաստում է տեսանյութ, կամ պրեզենտացիա իր ընտանիքի մասին:
- Սա կախված է դասարանից և թեմայի ուսուցման մակարդակից կարող է տարբերվել ըստ դասարանների
- 1-ինդասարամ՝ ներկայացնել ընտանիքի անդամներին, ասել անունները, տարիքը: Կարող է ձայնագրել իր արտասանությամբ այն ոտանավորը, որը սովորել է այս թեման անցնելիս
- 2- րդ դասարան՝ այստեղ կավելանա ընտանիքի անդամների արտաքին նկարագրությունը, նախասիրությունները:
- Հետազոտական աշխատանքի արդյունք կարող է լինել անհատական հանրագիտարանը, որը պարունակում է ինֆորմացիա երեք լեզուներով՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն: Այսպիսով կոնկրետ աշխատանքի միջոցով սովորողը կիրառում է իր գիտելիքները մի քանի առարկայից: Սա կարող է լինել տարբեր ուսուցիչների հետ կատարած աշխատանք:
- հեքիաթ
- բնագիտական նյութ
- կենդանիների մասին նյութ
- ծաղիկների մասին նյութ
- լեգենդներ
- տարբեր ազգերի սովորույթներ
- տոներ
- սպորտ
- իր մասին ինֆորմացիա

### 1-ինդասարան

Պատկերազարդ էլեկտրոնային գրքույկի ստեղծում՝ ոտանավորների, երգերի, շուտասելուկների և բառապաշարի վրա հիմնված: Աշխատանքը կարող է լինել անհատական (համատեղծ նողների հետ) կամ խմբային (մի խումբ սովորողների մասնակցությամբ, ուսուցչի ղեկավարությամբ)

**2-րդ դասարան**

Պատկերազարդ էլեկտրոնային գրքույկի ստեղծում՝ ոտանավորների, երգերի, շուտասելուկների և բառապաշարի վրահիմնված, Smart Notebook ծրագրով ստեղծված դասեր, դաս-խաղեր, անձնական էլեկտրոնային այբենարանի ստեղծում (Paint ծրագրով պատրաստվում են էլեկտրոնային էջեր յուրաքանչյուր դասի վերաբերյալ, որոնք վերջում ներկայանում են մեկ ձեռնարկի տեսքով)

**3-րդ դասարան**

Թեմատիկ բառարանների ստեծում, Smart Notebook ծրագրով դասերի ստեղծում,

Professions, /My family /My friend's family, My toys, My school, My friends, Games, Professions, Sport, Our house/My room, My day, Food – recipes, Seasons, Farm animals

**4-րդ դասարան**

Հանելուկներ, Թեմատիկ հետազոտական աշխատանքներ.

**My weekends, Meals, My relatives (uncle, aunt, cousins…) School, Clothes,**

**Seasons, Christmas, Easter, Mothers' Day, Father's day,**

**London,USA, Travelling, Transport, Riddles, Red Riding Hood, Goldilocks and the three bears, Tom Thumb, Cinderella,The fox in the well, The dog and the cat**

**5-րդդասարան**

Թեմատիկ հետազոտական աշխատանքներ

Animals, Nature, Planets, Clothes, Meals, My Hobby/ My birthday, Dinosaurs/for Past Simple Tense/,

**6-րդ դասարան**

Թեմատիկ հետազոտական աշխատանքներ

/Travelling, Holidays, My country, My favourite singer/ actor, My favourite book, Seasons, The place I live, Museums, My excursions,

Ավարտուն ուսումնական նյութերը, ըստ կարգի, ցուցադրվում են ուրբաթօրյա ցուցադրության ընթացքում: Լավագույն աշխատանքները կարող են ընդգրկվել կրթահամալիրում օգտագործվող ուսումնական նյութերի ցանկում:

**Սովորողի ուսումնական գործունեության ձևերը**

Մեդիահանրակրթության խորացված ուսուցմամբ դասարաններում սովորողի ուսումնական գործունեության ձևերը կախված են տվյալ դասարանում ՏՀՏ-ների կիրառման առանձնահատկություններից.

1. **Էլեկտրոնային գրատախտակով դասարաններ**
    - Համացանցի գործածումը՝ երգերի, ոտանավորների ունկնդրման համար
    - Համացանցի գործածումը ֆիլմերի, ուսումնական նյութերի դիտման համար
    - Համացանցի գործածումը թարգմանություններ կատարելու համար
    - Համացանցի գործածումը խմբային, դասրանական ուսումնական նյութերի ստեղծման համար
    - Համացանցի գործածումը Կրթահամալիրի կայքում դասարանական նյութեր և նորություններ տեղադրելու համար:
    - Office ծրագրային փաթեթի գործածումը՝ նյութերի, դասերի, առաջադրանքների կատարման համար /Word, Power Point/.
    - Paint ծրագրի գործածումը՝ ուսումնական նյութերը պատկերազարդելու համար
    - Notebook ծրագրի գործածումը՝ առաջադրանքների, ուսումնական նյութերի կատարման համար

2. **Պրոյեկտորով դասարաններ**
    - Վերոհիշյալ բոլոր գործողությունները կարելի է կատարել և այս դասարաններում, բացառությամբ տեղում գրատախտակի վրա աշխատելը:

3. **Էլեկտրոնային գրիչներով դասարաններ**
    - Aver+ ծրագրով կազմած բազմաթիվ թեստեր, դասեր
    - Համացանցի գործածում
4. **«Նոութբուքն ինձ դասընկեր» ծրագրով դասարաններ**
    - Համացանցի գործածման բոլոր ուսումնական հնարավորությունները
    - Էլեկտրոնային հաղորդագրություն
    - Բլոգերի, wiki-ների ստեղծում, կիրառում
    - Կրթահամալիրի կայքում անհատական նյութերի տեղադրում

- Անհատական կամ խմբային տարբեր աշխատանքների կատարում /հնարավոր է, որ մեկ դասաժամի ընթացքում սովորողները զբաղված լինեն տարբեր առարկաներով/:

Մեդիահանրակրթական բոլոր տեսակի դասարաններում հնարավոր է իրականացնել հեռավար ուսուցում՝ առողջական խնդիրներ ունեցող կամ երկրից բացակայող սովորողների համար: Նման ուսուցման պահանջի դեպքում դասավանդողը մշակում է էլեկտրոնային տարբերակով առաջադրանքներ, հարցաշարեր, թեստեր, ուսումնա-հետազոտական աշխատանքի թեմաներ և էլ.փոստով ուղարկում սովորողին: Սովորողը պարտավոր է նշված ժամանակահատվածում կատարել դրանք և նույն միջոցով վերադարձնել ուսուցչին՝ ստուգելու համար: Hot-mail-ի և skype-ի հնարավորության դեպքում դասավանդողը կարող է նաև առցանց դասընթացներ անցկացնել երկրից դուրս գտնվող սովորողի հետ:

Դասարանում և տանը սովորողը պարտավոր է ունենալ անհատական համակարգիչ՝ միացված համացանցին: Դասարանում պարտադիր է համարվում նաև ֆոտոխցիկի և թվային ձայնագրիչի առկայությունը. սովորողները նկարահանում են, համակարգչով ձևավորում և խմբագրում են նկարները: Այդ նկարները կարող են օգտագործվել ուսումնական նյութեր պատրաստելիս: Այս նույն նպատակին կարող են ծառայել նաև բջջային հեռախոսները: Թվային ձայնագրիչը օտար լեզվով երգերի, ոտանավորների, երկխոսությունների, ռադիոթատրոնի, ռադիոլուրի ձայնագրման համար է:

Առցանց դասընթացներ վարելու համար գործածվում են հետևյալ կայքերը (www.tolearnenglish.com, www.englishforkids.ru , www.englishfirst.ru, www.angles365.com , www.english-4u.de ), www.bitishcouncil.org և այլ բազմաթիվ կայքեր, որոնց հասցեները անընդհատ թարմացվում են և տեղադրվում են “Մեդիագրադարան” բաժնում:

Ուսումնական գործունեության ձևերից է նաև բացօթյա դասերի անցկացումը, որը կարող է իրականացվել ինչպես դպրոցի ներքին և արտաքին բակերում, այնպես էլ ուսումնական ճամփորդությունների միջոցով:

**Դասարանում և տանը ուսումնական պարապմունքի, ինքնակրթության կազմակերպման մեթոդական նկարագրություն**

Կրտսեր դպրոցում դասաժամերի քանակը թույլ է տալիս աշխատանքի մեծ մասը կատարել դասարանում: Տնային առաջադրանքը մեծապես դառնում է դասարանում չավարտած աշխատանքի շարունակություն կամ կրկնողություն:

Հաշվի առնելով սովորողների տարիքային առանձնահատկությունները, դասավանդողը յուրաքանչյուր դաս պետք է տոնի վերածի: Դրա համար նրան անհրաժեշտ է դասը հագեցնել զանազան, ցանկալի է, շարժական, խաղերով, այդ թվում դերախաղերով: /Խաղ- դասերի պաշարները կարող եք գտնել դպրոցների ենթակայքերում/: Դասերին օգտագործվում են տարբեր դիդակտիկ նյութեր՝ խաղալիքներ, ինքնաշեն տիկնիկներ, դիմակներ, նկարներ, նկար-քարտեր /այդ ամենը կարող են պատրաստել սովորողները/: Խաղերի միջոցով կրկնվում է անցած բառապաշարը, ամրապնդվում նորը: Զարգանում է երեխաների ուշադրությունը, հետաքրքրությունը:

Որպես արդյունավետ դասարանական աշխատանք՝ իրականացվում է նաև տարբեր մեթոդների կիրառումը, որը հնարավոր է անել միայն խմբային տարբերակով: Նման մեթոդների կիրառումը հետաքրքիր է դարձնում է դասը, սովորողներին խթանում մեխանիկական աշխատանքից անցնելու մտավորին: Հաճախ կիրառվում են պրիզմայի, ձնագնդիի, գունավոր գլխարկների, փազլի և այլ մեթոդները:

Ուսումնական պարապմունքի ժամանակ արվող աշխատանքի դասական տեսակ է նաև (ոչ պակաս կարևոր է, քան վերոհիշյալները) նոր դասի հետ կապված աշխատանքը, անհասկանալի պահերի մեկնաբանումը, վարժությունների, թեստային աշխատանքների միջոցով նոր դասի ամրապնդումը: Շատ օգտակար են դառնում տարբեր կայքերի միջոցով խաղերի և վարժությունների առցանց կատարումները, որտեղ սովորողը տեսնում և լսում է իր սխալը: Երբեմն անհրարժեշտ է լինում քննարկել տնային առաջադրանքը, տալ որևէ պարզաբանում կամ բացատրել սովորողին չհասկացածը:

Դասարանական աշխատանքի առավելություններից է նաև մրցակցության մտնոլորտի ստեղծումը, որը ոչ պակաս կարևոր է սովորողներին մոտիվացնելու համար: Մեկը մյուսին գերազանցելու, լավ արդյունքի հասնելու, ինչու չէ՞, նաև բարձր գնահատական վաստակելու նպատակով դասարանում սովորողները ավելի հաճույքով և աշխույժ են աշխատում:

Բանավոր խոսքի զարգացումը պահանջում է ճիշտ առոգանական հմտությունների ձեռք բերում, որին մեծապես նպաստում են աուդիոդասերը: Այս նպատակին են ծառայում նաև երգերը, ոտանավորները, հանելուկներն ու շուտասելուկները:

Դասարանական կամ տնային պարապմունքներից բխող նախագծեր կարող են իրականացվել: Նախագծերը կարող են պայմանավորված լինել նաև կրթայամալիրի տոնացույցով որոշված միջոցառումներով: Այս դեպքում պահանջվում է համագործակցություն՝ սովորող-դասավանդող-ծնող:

Մեդիաօլիմպիական շրջանում դասարանական և տնային աշխատանքի մեծմասը ուղղված է մեդիաօլիմպիադայի առաջադրանքների կատարմանը: Դրանք կարող են լինել անհատական և խմբային:

Սովորողներին նաև տրվում է ուսումնական կայերի հղումների ցանկ, որով նրանք կարող են տանը ամրապնդել դասարանում իրականացվածը, խաղալ նոր խաղեր, կատարել նոր առաջադրանքներ:

Օգտակար կայքեր.

www.tolearnenglish.com

www.englishforkids.ru

www.englishfirst.ru

www.angles365.com

www.english-4u.de

www.bitishcouncil.org

www.genkienglish.net

http://www.cubeez.com/

(Ցանկը դեռ ավելացվելու է)

## Գնահատում

**Գնահատման նպատակները**

Գնահատման հիմնական նպատակներ են սովորողների գիտելիքների մակարդակի, կարողությունների և հմտությունների տիրապետման ստուգումը, ուսումնական գործընթացի արդյունավետությունը, ուսումնական որակի բացահայտումն ու վերահսկումը:

Գնահատման հիմնական սկզբունքները՝

- Օբյեկտիվություն
- Արդարություն և անկողմնապահություն
- Հիմնավորվածություն

**Գնահատման տեսակները**

1-4-րդ դասարանցիների աշխատանքը գնահատանիշով չի գնահատվում: Յուրաքանչյուր կիսամյակի վերջում սովորողը ներկայացնում է անհատապես և խմբով կատարած աշխատանքների՝ առաջադիմության թղթապանակը: “Իմացումի հրճվանք”

ծրագրի յուրաքանչյուր կիսամյակը մեկ սովորողի համար լրացվում է աճի զարգացման բնութագիր, որտեղ օտար լեզվի դասավանդողը ունի իր բաժինը: Սովորողները ուսման ընթացքում և կիսամյակը մեկ կատարում են ինքնաստուգման աշխատանքներ և մասնակցում են ստուգատեսներին: Սովորողի էլեկտրոնային թղթապանակում կամ հաշվետվության մեջ նշվում են իր անհատական կամ խմբային կատարած աշխատանքների հղումները:
Գնահատումը 1-4-րդ դասարաններում խրախուսական բնույթ է կրում. երեխաները չեն գնահատվում նիշերով, այլ ստանում են զանազան մրցանակներ (տիպեր, աստղիկներ, “Կեցցես”-ներ և այլն):

5-6-րդ դասարաններում գնահատումը կատարվում է 10 բալլանոց համակարգով:

Կիսամյակային գնահատականները դրվում են կիսամյակային ստուգատեսներին, ուսումնա-հետազոտական ճամբարներին, կրթահամալիրային մեդիաօլիմպիադաներին մասնակցության արդյունքում, ինչպես նաև տարվա ընթացքում կատարած հետազոտական աշխատանքների հիման վրա: Գնահատականի գոյացման բաղկացուցիչ են հանդիսանում բանավոր պատասխանները, ընթացիկ գրավոր աշխատանքները, կիսամյակային ամփոփիչ ստուգարքրեը: Գործնական աշխատանքի գնահատումը իրականացվում է ստուգատեսներին ներկայացված նոյութերի հիման վրա:

2-4-րդ դասարաններում ընթացիկ ինքնաստուգումները իրականացվում են ուսուցչի հայեցողությամբ:

4-րդ դասարանի վերջում անցկացվում է ամփոփիչ ստուգարք:

5-6-րդ դասարաններում անցկացվում են ընթացիկ ինքնաստուգումներ՝ առնվազն տարեկան 8 անգամ և ստուգումներ՝ առնվազն տարեկան 4 անգամ:

Գնահատելիս հաշվի են առնվում սովորողների մասնակցությունը կրթահամալիրային միջոցառումներին /հոկտեմբերյան և մայիսյան բաց փորձաքննություններ, Հանրակրթական Դիջիթեք, «Ժանգոտ Դդում» և Երաժշտական փառատոն, և այլն/: Այս ստուգատեսներին սովորողները անհատապես կամ խմբային, դասավանդողի ղեկավարությամբ, ներկայացնում են իրենց կատարած աշխատանքները օտար լեզվով: Կարող են ներկայացվել նաև ընթացիկ աշխատանքները, որոնք նախկինում տեղադրվել են Կրթահամալիրի կայքում /թարգմանություններ, ուսումնական առաջադրանքներ և այլն/:
Յուրաքանչյուր կիսամյակի վերջում ծնողին էլեկտրոնային և թղթային տարբերակով ներկայացվում են սովորողի ամփոփաթերթիկները, որտեղ ներառված են նրա գործունեության բոլոր ոլորտները:

## Ուսումնա-հասարակական աշխատանքներ

Սովորողները մասնակցում են կրթահամալիրում իրականացվող բոլոր ուսումնա-հասարակական ծրագրերին, որի ընթացքում զարգանում է տվյալ բնագավառին բնորոշ բառապաշարը /կենդանիների խնամք, շրջակա միջավայրի խնամք և բարելավում, աշխատանք խոհանոց-լաբորատորիայում, բակային աշխատանքներ, բույսերի և կենդանիների խնամք, գրքերի վերանորոգում և այլն: Այս աշխատանքների արդյունքում ստեղծվում են ուսումնական նյութեր և կատարվում են հետազոտական աշխատանքներ: Լավագույն աշխատանքները ներկայացվում են ուրբաթօրյա ցուցադրություններին և տեղադրվում կրթահամալիրի կայքում կամ դպրոցների ենթակայքերում:

## Ուսումնական ճամփորդություններ

Ուսումնական ճամփորդությունները իրականացվում են համագործակցելով այլ առարկաների դասավանդողների հետ. օրինակ՝ կենդանաբանական այգի, բուսաբանական այգի, թատրոններ, թանգարաններ, ցուցահանդեսներ և այլն: Ճամփորդություններից հետո սովորողները դասավանդողի հետ պատրաստում են օտար լեզվով ուսումնական նյութ /կենդանական, բուսական և այլ բառարաններ, հետաքրքիր նյութեր անգլերենով, ռադիո և տեսալուրեր և այլն/:

Սովորողները դասավանդողի հետ կարող են կատարել վիրտուալ ուսումանակն ճամփորդություն՝ տարբեր կայքերի միջոցով: Նրանք կարող են վիրտուալ այցելություն կատարել Անգլիա, ԱՄՆ և այլն, թանգարաններ, գրադարաններ:

## Գրականություն

1-ին դասարանում դասավանդումը իրականացվում է առանց դասագրքերի, օգտագործվում են ուսումնական կայքեր, հատուկ համակարգչային խաղեր: /Օգտագործվող կայքեր- www.genkienglish.net www.tolearnenglish.com www.angles365.com , Կրթահամալիրում ստեղծված “English 1-2” CD, որը ներառում է 8 թեմատիկ դաս՝ համապատասխան ծրագրի պահանջներին: Յուրաքանչյուր դաս ներառում է անհրաժեշտ բառապաշար, երգացանկ, ոտանավորներ և խաղեր/: CD-ների պարունակությունը տեղադրված է նաև կրթահամալիրի կայքի ենթակայքերում:

2-րդ դասարան-Գ.Գասպարյան-3

3-րդ դասարան- 1-ին կիսամյակ-Ապրեսյան “ABC”, 2-րդ կիսամյակ-Գասպարյան -4

4-րդ դասարան-Գասպարյան-4, Round Up-2

5-րդ դասարան-Գասպարյան-5, Round Up-2 /շարունակություն/, Верешагина-3 /Reader/,

6-րդ դասարան-Верешагина-VI

Որպես լրացուցիչ գրականություն կարող է գործածվել հետևյալ գրականությունը.

- Macmillan հրատարակչության դասագրքեր, գիրք-տետրեր /Bravo, Way Ahead/
- Մեդիագրականություն

Լուսինե Բուշ